«Ծիրակացու ճեմարան»
միջազգային գիտակրթական համալիր

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ
2024-2025
Մայրենի (8-րդ դասարան)

Անուն Ազգանուն _____

Դպրոց _____

Դասարան _____ Խումբ _____

Բաց Օլիմպիադա

Հայ լեզուն տունն է հայուն աշխարհիս չորս ծագերուն...

Մուշեղ Իշխան

1. **Միրելի՛ բարեկամ, ուշադի՛ր կարդա տեքստը:**

Կառավարությունը Գաբրիելին նվիրեց հսկայական մի առանձնատուն՝ հայրենիքին անբասիր ծառայելու համար: Նրան սպասարկում էին ռոբոտները: Ճաշասենյակում ծառայողները մատուցող ռոբոտներն էին, իսկ հյուրասենյակում մի քանիսն էին:

Սկզբում ռոբոտները շատ սիրալիր և բարյացակամ էին, անթերի կատարում էին իրենց գործը: Նրանք նաև ուրբաթախոս էին և անխոս ծառայում էին Գաբրիելին: Բայց օրըստօրե նրանք դժնի և ամբարիշտ դարձան: Անընդհատ համբերությունից հանում և զայրացնում էին նրան: Մատռվակ ռոբոտը արբշիռ վարք ուներ, հյուրընկալության ռոբոտներից մեկը՝ անընդմեջ ծաղրում, իսկ մյուսը բամբասում և չարախոսում էր Գաբրիելին:

Ննջասենյակի ռոբոտը վերին ատյաններ բողոքներ էր ուղարկում՝ հերյուրանքներով ու խծբծանքներով լի: Իսկ համակարգչով աշխատող ռոբոտն էլ իրեն երևակայում էր որպես իգական սեռի չքնաղ ներկայացուցիչ և անընդհատ բողոքում էր, որ Գաբրիելը անուշադիր է իր նման չնաշխարհիկ էակի հանդեպ:

Մի օր էլ…..

2. **Տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրիր հոմանիշ բառերի զույգեր (3 միավոր):**

Անբասիր-անթերի

Սիրալիր-բարյացակամ

Դժնի-ամբարիշտ

Հերյուրանք-խծբծանք

Չքնաղ-չնաշխարհիկ

Բամբասել-չարախոսել

3. **Տեքստի ո՞ր բառերի բացատրությունն են տրված բառակապակցությունները (3 միավոր):**

Գինի մատուցող—-մատռվակ

Արատ չունեցող, կշտամբելու առիթ չտվող—անբասիր, անթերի

Ձեռ առնել—-ծաղրել, ծանակել

Քիչ խոսող, սակավախոս—-ուրբաթախոս

Հարբած և վայելքների անձնատուր—արբշիռ-

Գութ չունեցող, անխիղճ—-դժնի, ամբարիշտ

4. **Տրված բառերը տեքստի ո՞ր բառերի հականիշներն են. հականիշ զույգերը գրի՛ր կողք կողքի (3 միավոր):**

Բարեգութ, հյուղակ, անբարեհամբույր, դրվատել, ստորին, տգեղ:

Բարեգութ- դժնի

Հյուղակ-առանձնատուն

Անբարեհամբույր-սիրալիր

Դրվատել-չարախոսել

Ստորին-վերին

Տգեղ-չքնաղ, չնաշխարհիկ

5. **Տեքստում գտի՛ր և դո՛ւրս գրիր կազմությամբ պարզ, ածանցավոր և բարդ մեկական ածական. դրանք գործածի՛ր հետևյալ կառուցվածքն ունեցող բառակապակցությունների մեջ (ընդամենը 6 բառակապակցություն) (3 միավոր):**

ածական + գոյական

ածական + բայ

Կազմությամբ պարզ՝ դժնի/ամբարիշտ – դժնի/ամբարիշտ արարք, դժնի/ամբարիշտ

ժպիտ

դժնի ծիծաղել, դժնի վարվել

ածանցավոր՝ անբասիր, անթերի, հսկայական, անխոս, իգական-

անթերի խոսք, անթերի շարադրանք

անթերի խոսել, անթերի գրել

բարդ՝ սիրալիր, բայացակամ

սիրալիր հայացք, սիրալիր ողջույն

սիրալիր ժպտալ, սիրալիր բարևել

Ուշադրություն: Եթե աշակերտը որպես կազմությամբ պարզ ածական ընտրել է ***չքնաղ*** բառը, ապա սա պիտի ճիշտ համարել և տալ համապատասխան միավորը:

Չնաշխարհիկ բառը որպես բարդ նշելը ճիշտ չէ, քանի որ սա բարդաածանցավոր բառ է:

6. **Տեքստում գտի՛ր, դո՛ւրս գրիր բաղադրյալ ստորոգյալները, որոշի՛ր ստորոգելիների խոսքիմասային պատկանելիությունը (3 միավոր):**

ռոբոտներն էին- ռոբոտ-գոյական

մի քանիսն էին – մի քանիսը- անորոշ դերանուն

սիրալիր ու բարյացակամ էին – սիրալիր, բարյացակամ- որակական

ածականներ

դժնի և ամբարիշտ դարձան – դժնի, ամբարիշտ- որակական ածականներ

Ուշադրություն ստուգող ուսուցչին: Եթե աշակերտը երեք բաղադրյալ ստորոգյալ է գտել (նշված 4-ի փոխարեն) և նշել է խոսքիմասային պատկանելիությունը, բայց տեսակը չի նշել, դարձյալ նրան տրվում է հասանելիք 3 միավորը:

7. **10-12 նախադասությամբ հորինի՛ր վերևում տրված պատմության ավարտի քո տարբերակը (5 միավոր):**

Հուշում. աշխատի՛ր դրսևորել երևակայություն և ստեղծագործական մոտեցում:

Գնահատման սանդղակ

Միավոր	Նկարագրություն
5	1. Հանդես է բերել ստեղծագործական մոտեցում և վառ երևակայություն: 2. Գերազանցորեն և հետևողականորեն շարունակել է պատմությունը, հորինել է անսպասելի, բայց տրամաբանական ավարտ: 3. Խոսքը պատկերավոր է, նախադասությունները տրամաբանորեն կապակցված են: 4. Կիրառել է հարուստ բառապաշար: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական սխալներ, վրիպակներ չկան:
4	1. Մասամբ դրսևորել է ստեղծագործական մոտեցում և երևակայություն: 2. Լավ շարունակել է պատմությունը, հորինել է տրամաբանական ավարտ: 3. Խոսքը պատկերավոր է, բայց որոշ տեղերում նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 4. Կիրառել է բավական հարուստ բառապաշար: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական 2-3 սխալներ և վրիպակներ կան:
3-2	1. Ստեղծագործական մոտեցում և երևակայություն չի դրսևորել: 2. Շարունակել է պատմությունը, հորինել է ոչ այնքան տրամաբանական ավարտ: 3. Խոսքը պատկերավոր չէ, նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 4. Բառապաշարն աղքատիկ է: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ, վրիպակներ կան:
1	1. Ստեղծագործական մոտեցում և երևակայություն չի դրսևորել: 2. Պատմության ավարտ չի հորինել: 3. Խոսքը պատկերավոր չէ, նախադասությունները տրամաբանորեն կապակցված չեն: 4. Բառապաշարն աղքատիկ է: 5. Ուղղագրական, կետադրական, քերականական 5-6 սխալներ, վրիպակներ կան:
0	Պատմության շարունակությունը չի հորինել: